Բիֆարման Յիսային էլ չունէյին ճար,
Ցվէրվաց ղարիպ տեղ ընկան գարբէդար.
Որ ժամանակ աշխարք ելաւ բարղարար,
Օվ որ ուզեց դառցաւ, ուր վաթան ելաւ։

Վաթան էլաւ օվ որ պռծավ ղաֆասից,
Գլուխն գինջացաւ էտ ասուլից.
Ազատեց ուր ջանն գուռջի բռսից,
Դառցաւ հայրէնիքն սայայվան ելաւ։

Միայբան ման գէգէր հետ ուր ասկերին,
Փառք տվէք Աստուծուն ազատվեց գերին.
Ողորմութուն ելաւ խեղճ նաչարներին,
Օվ Յիսաց թաղայդան նոր ինսան ելաւ։

Ինսանն պէտկ ա, որ միշտ խօնար լինի,
Որ վէրջի օրն իրան համար տեղ չինի.
Պղինձն տայ, արծաթ ոսկէղէն գնի,
Էն օրն որ ուզէղ դատաստան ելաւ։

Դատաստանին արժան ելնի Ցիսուսին,
Որ քավէ մեխկէրն խառնվի լուսին.
Վերին Երուսաղէմ մարգարիտ դասին,
Հայ նստաց չուրս կողմն չրաղվան ելաւ։

Չրաղվան է գրախտըն եդեմայկան,
Օվ զք որ ընկանեն յաւիտենայկան.
Պռծնէլիք չէքայ, որ մին էլ դուս գան,
Լուսեղէն օթէվան տեղ մաքան ելաւ։

Մաքան էլաւ անպարպելի հայ Յիսաց,
Երանի էն մարդուն, որ էտեղ գնաց.
Դասէրու վերեվն առաչինդգաց,
Օվհանէս Մկէրտչին միաբան ելաւ։

Միայբան կէ Յիսան առանցի վաղայ,
Սուրբ ավէտարանն ինքն չէհադ ա.
Սէհակայ պէս մաքուրն ա, անարադ ա,
Ապրէհամայ որդին, որ ղուրբան ելաւ։

Ղուրբան ասէլիքն հայէրէն մատաղ,
Խոնայրաբառ կագնաց ոչինչ չունէր վախ.
Հրաման Աստուծու ղոշն ծառէն կախ,
Աթօրիցն էգպէս հրաման ելաւ։

Վարդան օղլի լաւ մտածէ քո բանին,
Որ չկնես խորխորատ մութն մաքանին.
Տէրն արժան անի ուր դատաստանին,
Օվ պայի ուրն մեծ ալիջան ելաւ։

Հրատարակեց՝ ԱՐԱՄ ՆՐԵՄՆԱՆ

(Շարունակելի։)

5/6-66

## ՕԼՄԻՒՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՏԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՈՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

—

1.

**Թ. III, 17.**

### ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԵՒ ՃԱՇՈՑ

ՌՃԻԸ = 1728։

*ԹՈՒՂԹՔ՝ Ա. հատորը՝ 69, Բ. հատորը 50: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35×24: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, 26×7,50: — ՏՈՂ՝ 38: — ՆԻՒԹ՝ թուղթ զօրաւոր: — ԿԱԶՄ՝ մանուշակագոյն կաշեկազմ՝ ոսկեզօծ, զանազան սիրուն զարդերով, քիչ մը վնասուած: Կռնակը գրուած է «Missale 1677, B. 7»: — ՀԱՆԳԱՄԱՆՔ մաքուր մնացած: — ԳԻՐ՝ նօտրագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ կարմիր թանաքով: — ԳԱՏԱՐԿ՝ Ա. հատորին մէջ թղ. 1ա—4բ, 7ա, բ: 68բ—69բ. Բ. հատորին մէջ թղ. 1ա—4բ, 43բ 53բ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԻԸ = 1728: — ԳՐԻՉ՝ Վրթանէս արքեպիսկոպոս: — ՏԵՂԻ՝ Հռոմ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ թղ. 7ա (Բ. հտր.); — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ Ձեռագիրս կազմուած է մի քանի տպագրութիւններու հետ եւ բաժնուած է երկու հատորի:*

Մատեանս է Պատարագամատոյց եւ Ճաշոց:

Տպագիր. էջ 1. «Սպասաւորութիւն պատարագի, Ministerium missae, Romae, typis Sacrae Congregationis de Propaganda fide, MDCLXXVII»։

Կը սկսի «Խորհուրդ խորին»ով եւ կ'աւարտի «Պահպանեսցէ»ով (էջ 19)։

Տպագիր. էջ 21. «Correctiones officii divini Armenorum. Ուղղագրութիւն ժամակարգութեան Հայոց ըն ժամագրկան, որոյ մակդիրն է այսպէս՝ Աղօթամատոյց եւ ժամագիրք. ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ կաթուղիկոսի սրբոյ Էջմիածնի, յԱմստէլոտամում, ի թուին Քրիստոսի 1667 եւ Հայոց 1116 փետրվարի ամսոյ քսան»։

Տպագիր. էջ 25. «Correctiones Hymnorum Armenorum. Ուղղագրութիւնք Շարականաց ըն գրքոյ, որոյ մակագիրն է այսպէս՝ Շարակնոց. երաժշտական երգեցմունք հոգեւորականք աստուածայնոց եւ երջանկաց սրբոց վարդապետաց Հայոց թարգմանչաց զկարգաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանողաց, ի թուին Քրիստոսի ՌՈԿԴ եւ ի Հայոց 1113 յօգոստոսի ամսոյն ԺԴ. ի տպարան(ի) սուրբ Էջմիածնի եւ սուրբ Սարգսի, որ յԱմստէլոտամ, յերկրորդումն աւուր վերափոխման տօնի Տիրամօր կուսի»[1]։

[1] Ասոր եւ վերիններուն մասին հմմտ. «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ 1883, էջ 633, 224, 512։

*Ա. Ձեռագիր.* Թղ. 5ա. “Ցանկ առաջի հատորի գրոցս, սկսեալ ի ծննդենէ փրկ(չ)ին եւ ի մեծի պահոց եւ այլ ամենայն տէրունական տօնից ըստ գլոցես այբուբենի համարովն։ վասն ծննդեան վիճիլիայի, վասն ի տօնի ծննդեան առաջին„։

1. Թղ. 8ա. “Ժամամուտք ըստ կարգի աւուրց պահոց, տօնից եւ տէրունականաց եւ ամենայն սրբոց„։

2. Թղ. 11ա. “Հատոր յառաջին որ վիճիլ եւ հսկումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Պօղոսի Հռովմայեցւոց, գլխ. Ա. եւ Ղուկ., գլ. Բ. համար Ա„։

Այսպէս կարգաւ կը դրուին օրերու ընթերցուածն, Աւետարանը, Մեսեդիք, եւ Ալէլուք։ Ինչ ինչ օրերու ընթերցուածը հին կտակարանէն է։ Թղ. 44բ կայ. “Յարութեան ալէլուն յորդորակ է՝ Յաղթանակիս պասեքական գովեստ մատուցանեմք քրիստոնեայք…„։

*Տպագիր.* “Օրէնք արկանելոյ սպաս ե. կեղեցւոյ„։ Էջ 1։ “Աղօթք պատրաստութեան պատարագի„։ Էջ 3 ով կը սկսի պատարագը։

*Բ. Ձեռագիր.* 1. Թղ. 5ա. “Ցանկ երկրորդ հատորին, Յունվար ամսոյ սկսեալ հասարակ եւ յատուկ սրբոց գիրքն եւ աւետարանն այսու այբուբենի համարով գտցես. Ա. վասն սրբոյն Ստեփաննոսի„։

2. Թղ. 8ա. “Երկրորդ յատուկ եւ հասարակ ամենայն սրբոց։ Յետ ծննդեան Յունվարէն սկսեալ մինչեւ ի ծնունդ այս ցանկովս գտանես„։ Թղ. 8ա. “Ի տօնի սրբոյն Ստեփաննոսի. գիրք ի գործոց Առաքելոց գլխ. Զ համար Ը„։

Մի քանի սրբերէ յետոյ կը յաջորդեն Թղ. 10բ “պատարագ հայրապետաց„, Թղ. 11ա. “պատարագ մարտիրոսաց„, Թղ. 12բ, 13ա. “պ. կուսանաց„։

3. Թղ. 14բ. “Հատոր առաքելոց սրբոց, բայց նախ Յովհաննու Կարապետի„։

4. Թղ. 22ա. “Ի տօնի սրբոյն Ստեփաննոսի Հռոմայ հայրապետին եւ ամենայն հայրապետացն Հռոմայ, որք են մարտիրոսք„։

5. Թղ. 22բ—30ա. “Տօնք Յունվար ամսոյ եւ ամենայն ամսոց„։

Կը յիշուին նաեւ լատինական բազմաթիւ տօներ զ. օ. Թղ. 28ա. “Ի տօնի Զինաբեր Աստուածածնի։ Թղ. 33ա. կայ “Խրատ յաղագս պատարագի„։

6. Թղ. 33. “Պատարագ սրբոյ Երրորդութեան Պօղ. առ Կորնթ. Գլ. ԺԳ. Աւետ. Յովհ. Գլ. ԺԵ„։

Թղ. 33բ. “Պ(ատարագ) առ Ս. Հոգին„։

Թղ 34ա “Պ. Ս. Խաչի„։

Թղ. 34ա. “Պ. Չարչարանաց„։

Թղ. 34բ. “Պ Եօթն վիրաց Ս. Աստուածածնի„։

7. Թղ. 35ա. “Պատարագք ասին վասն զանազան կարեաց եւ պիտոյից որ եւ լցէ. բայց ի կիւրակէից եւ կրկին տօնից։ Այլ եւ ընտրութեան ծայրագոյն քահանայապետին„։

Ասկէ վերջ ժամամուտին կը յաջորդէ մերթ ընդ մերթ աղօթք մը. զ. օ. “Աղօթք վասն փափ. Աստուած որ ես հովիւ եւ խնամօղ արարածոց„՝ “Զանազան կարեաց եւ պիտոյից„ պատարագներէն են զ. օ. Թղ. 36ա. “Պատարագ վասն բառնալոյ զհերձուածողութիւն„, Թղ. 37բ. “վասն Թողութեան մեղաց„, Թղ. 39ա. “վասն հիւանդաց„՝ Ապա կը յաջորդեն 40ա. “ի տօնի սրբոյն Ճենարիոսի եպիսկոպոսին„, Թղ. 40բ. “Ներութէից առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի„։ Թղ. 41ա “Մաղթանք առ Ս. Աստուածածին„ եւն։ Թղ. 42ա—43բ դրուած են ննջեցելոց պատարագներ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թղ. 7ա. “Բայց ծանիք սիրելիք Ղ Թիւ մինչ ի Ճ սղալեր եմ ցանկի գլ. Ժ. համարք, վասն որոյ արտաքոյ կարգին ասա եդի. անմեղադիր լերուք, քանզի մեծ Կ. ամեայ ծերութեամբս աշխատեցայ Վրդանէս իբր Արքեպիսկոպոս ընդ հովանեաւ սրբոյն Մարիամու. Եգիպտացւոյն յետ Ը. ամեայ նստելոյն իմոյ ի Հռոմ աւարտեցաւ ՌԻՃԻԸ Թւոյն Քրիստոսի„։ (Վրթանէսի մասին հմմտ. Գալէմքեարեան Հ. Գ. “Կենսագրութիւն Սարգիս արքեպ. Սառաֆեանի„՝ Վիեննա, 1908, էջ 207—226։)

2.

## Թ. 318. Ն. 6. M. S. II, 8, 61.

## ՔԱՐՈԶԱԳԻՐՔ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 24։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×14·5։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն 16×5×5 = 10։ — ՏՈՂ՝ 34։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կռնակը կաշի, վրան թուղթ է քաշուած։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ վնասուած, սկիզբը չկայ։ — ԳԻՐ՝ բոլորագիր։ — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր։ — ԺԱՄԱՆԱԿ չէ նշանակուած։ — ԳՐԻՉ՝ անծանօթ։ — ՏԵՂԻ՝ անծանօթ։ — ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ չունի։*

**Մատեանս է՝** “*Քարոզք ի Ժ. պատուիրանս Աստուծոյ եւ ցանկ քարոզաց*„։

Կը սկսի (թերի է սկիզբը) Թղ. 2ա. “…թութիւն է մարդոյ ճանաչել զԱստուած, որպէս Պօղոս հաւատալ պարտ է, եթէ է Աստուած, ապա բարի գործով առ Աստուած մօտիլ եւ զկամս Նորա առնել„։

2. Թղ. 2ա. "Երկրորդ բանն որ ասէ. Մի
արասցես քեզ կուռս եւ մի նմանութիւն յերկինս
եւ յերկրի։ Ցայտնի միտքն այս է զի ոչ պաշ-
տեմք կուռք, արծաթի, ոսկի կամ այլ ինչ":
3. Թղ. 4բ. "Իններորդ բան հրամանացն
Աստուծոյ որ ասէ Մի սուտ վկայեր։ Բազում եւ
շատ չարեաց պարտաւոր սուտ վկայն, եթէ խա-
բուի ի բարեկամէ":
4. Թղ. 5ա. "Երրորդն մի կոչել զանունն
Աստուծոյ ի վերայ սնոտեաց, այսինքն ոչ է եր-
դուիլ սուտ, վասն զի կռապաշտքն սուտ կոչեն
զանունն Աստուծոյ...":
5. Թղ. 7ա. "Հինգերորդ բան որ պա-
տուեա զհայր եւ զմայր։ Ահքէ զառաջին հինգ
բան օրինացն ի յԱստուծոյ սկսեալ",
6. Թղ. 9բ. "Նորին քարոզ ի բանն, որ
Մի սպանաներ, մի շնար, մի գողանար, մի սուտ
վկայեր, մի ցանկանար ընչից եւ այլն... Աւրէնս
յերկուս. Հինգս բաժանեաց, վասն զի Ժ. զգայա-
րանք է մարդուս":
7. Թ. 11ա. "Եւթներորդ բան օրինացն,
որ ասէ Մի շնար։ Ոչ փոքր անիրաւութիւն է այս,
այլ զի գլխաւոր է մահուչափ մեղացն":
8. Թղ. 13բ. "Ութերորդ բան օրինացն որ
ասէ, Մի գողանար. օգնեայ Աստուած։ կենգա-
ղօգուտ եւ օգտակարք են այս խրատք, զոր առա-
ջին հասակն պարտ է վարժել զմանկունս": Ապա՛
9. Թղ. 15ա. "Ի սուն Նորին վասն ձեռ-
նադրութեան. քահանայք քո զգեցցին... կարգն
մկրտել, լուսաւորել, կատարել, քահանայն
հրեշտակ": "Ի սուն եւ մի Նորին Դարձեալ
վասն քահանայութեան. Դու ես քահանայ
յաւիտեան, (վ)աթսուն եւ Բ. վասն մահացու
մեղաց. Ապականէ զկեանս, բառնայ զազգու-
թիւն, թողու զճանապարհ":
10. Թղ. 15ա. "Ցանկն է երկրորդ հա-
տորի քարոզիս։ (Ա)ռաջին նախերգաբար վասն
օրինաց ի բանն առաջնորդեա ի շաւիղս պա-
տուիրանաց քոց", ...Թղ. 23ա. "ՃՁԶ (հ)ա-
րիւր եւ ՁԶ. Նորին ներբողեա(ն) ի բարեյաղթ
նահատակն եւ կաթողիկոսն Ս. Թէոդորոս եւ
յիշատակարան գրոցս ի փառս Քրիստոսի։ Աւար-
տեալ եւ պատճառք Ցղութեան Յովհաննու կա-
րապետի ամէն":
Ձեռագիրս իբր Թրքերէն ձեռագիր նշանա-
կուած էր ցուցակին մէջ։

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

Օրմիոյ (Զենաստան), 7. Փետր. 1924:

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ Ի ՍԵԲԱՍՏԻԱ

— (Շարունակութիւն)

### 16.

### ԱՒԵՏԱՐԱՆ

1272։

*ԹՈՒՂԹՔ՝ 226 (էջք 552): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×13·7: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՏՈՂՔ՝ 17: — ՄԱԳԱՂԱ-ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշին ինկած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ միայն վերջը երկու թերթ կայ: — ԳԻՐ՝ հին բոլորագիր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բոլորովին մգլոտած: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ չկան: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ աննշան: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՉԻԱ: — ԳՐԻՉ՝ Գրիգոր: — ՍՏԱՑՈՂ՝ Սիոն: — ՏԵՂԻ՝ Երիզա: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ էջ 548, 550: — ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Ս. Հրեշտակապետի վանուց կը վերաբերի:*

Մատեանս է Աւետարան, ուր կան բովանդա-կուած՝ էջ 1—150 Մատթէոս. էջ 153—250 Մարկոս. էջ 253—425 Ղուկաս. էջ 427—548 Յովհաննէս։ Վերջին երեքին սկիզբները կը պակսին։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 548. Բոլոր գրչէն. "Զեղկելիս Գրիգոր յիշեցէք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր":

Էջ 550 բոլոր գրչէն. "Շնորհիւ Տեառն ակսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՉԻԱ։ Ես Սիոն կուսակրաւն քահանայ, ստացայ զսա ինձ զաւակ ի յիշատակ ինձ եւ Սիոն եւ ընտանի յԵրուսաղէմ. յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ եղբարց իմոց ի Քրիստոս կատարե-լոց որ անգան ի սուր. որոնց Քրիստոս Աստուած ողորմեսցի ի գալստեան իւրում։ Արդ ես Գրիգոր աւտարաշխարհիկ գոլով գրեցի ըստ իմում կարի ի վանս Երիզա(յ)ի դրան սուրբ Աստուածածնիս, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս ի յառաջնորդու-թեան եւ ի հայրութեան Գորգա, որոց Քրիստոս Աստուած վարձս բարիս հատուսցէ նմա եւ այլ եղ-բարցս հաւասար, որք աւգտակարք եղեն մեզ ի յամենայն ինչ եւ իցէ. որք խնդրող եղեն բանիցս Քրիստոսի. ահա մարգարիտս անփտելի. զորս ան-ճառելի, ասեն թէ փառք քեզ են, եւ որ չեն կամ այսպէս ասին կամ այնպէս. Քրիստոս Աստուած վարձս տացէ Աւետին եւ եղբարց իւրոց ամէն, որ է սա ի սեռէ ընտիր յաւրի-զաւրինակս ետուն, որ է սա ի սեռէ ընտիր յաւրի-նակէ. եւ որ ընծայեն սա ի Քրիստոս, յիշեսջիք զմեզ ի Քրիստոս Յիսուս։ Արդ գրեալ եղեւ սա ի գաւառս Երիզա որ յորջորջի Եկեղեաց գաւառ, ի հայրապետութեան Տէր Սարգսի, իշխանակալու-թեան որդւոյ Նորա Պարոն Յոհանիսի, որ է ի ժամանակս սոցա խաղաղութիւն Քրիստոնէից, զորս Քրիստոս Աստուած երկարակեացս արասցէ. ամէն։